



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁԻ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 10 » մարտի 2015թ.

N 26

ք. Ստեփանակերտ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազության կոռուպցիոն, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով բաժնում աշխատանքի բաժանում կատարելու մասին

Ղեկավարվելով «Դատախազության մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և 28-րդ հոդվածով, համաձայն ԼՂՀ դատախազության Կանոնակարգի 9-րդ, 19-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ կետերի և «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 72-րդ և 73-րդ հոդվածների,

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. ԼՂՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով բաժնում /այսուհետ բաժին/, ըստ զբաղեցրած պաշտոնների, կատարել աշխատանքի հետևյալ բաժանումը.

1) Բաժնի պետ Ա.Գ. Գալստյանին՝

1.1 Ղեկավարել, կազմակերպել և համակարգել բաժնի աշխատանքները, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել դրանց կատարելագործման ուղղությամբ:

1.2 Վերահսկել բաժնի աշխատակիցների վրա դրված պարտականությունների կատարման գործընթացը:

1.3 Ապահովել կոռուպցիոն, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով ԼՂՀ գլխավոր դատախազի հրամանների, ցուցումների, կարգադրությունների և ոլորտը համակարգող տեղակալի ցուցումների կատարումը:

1.4 Առաջարկություններ ներկայացնել ոլորտը համակարգող ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալին՝ բաժնի աշխատակիցներին խրախուսելու կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ,

1.5 Մասնակցել ԼՂՀ գլխավոր դատախազության աշխատանքային ծրագրի նախապատրաստման աշխատանքներին:

1.6 Կազմակերպել ԼՂՀ գլխավոր դատախազի հրամաններից, հանձնարարականներից և դատախազության կոլեգիայի նիստում ընդունված որոշումներից բխող՝ բաժնի աշխատանքների վիճակագրական հաշվետվության կազմման աշխատանքները:

1.7 Հրավիրել օպերատիվ խորհրդակցություններ:

1.8 Իրականացնել ԼՂՀ ԿԱ ոստիկանության քննչական վարչության, տնտեսական և պաշտոնեական հանցագործությունների դեմ պայքայի բաժնի և ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայության օպերատիվ-հետախուզական վարչության ու քննչական բաժնի կողմից քննվող կոռուպցիոն, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով հետաքննության ու նախաքննության և հիշյալ բնույթի հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և ընթացքավորման օրինականության նկատմամբ դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում:

1.9 Կատարել ԼՂՀ գլխավոր դատախազի և ոլորտը համակարգող տեղակալի հանձնարարականները:

1.10 Կատարել «Դատախազության մասին» ԼՂՀ օրենքով և ԼՂՀ դատախազության Կանոնակարգով նախատեսված աշխատանքները:

Բաժնի պետը բաժնի գործունեության համար պատասխանատվություն է կրում ԼՂՀ գլխավոր դատախազի և ոլորտը համակարգող տեղակալի առջև:

2) Բաժնի ավագ դատախազ Գ.Գ.Ներսիսյանին՝

2.1 Իրականացնել հանձնարարված՝ կոռուպցիոն, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով հետաքննության ու նախաքննության և հիշյալ բնույթի հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և ընթացքավորման օրինականության նկատմամբ դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում, դատարանում մեղադրանքի պաշտպանություն:

2.2 ԼՂՀ գլխավոր դատախազի կողմից սահմանված կարգով իրականացնել ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքի, Ասկերանի, Մարտակերտի և Շահումյանի շրջանների դատախազությունների դատախազների կողմից կոռուպցիոն, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով կատարվող աշխատանքների վերահսկողություն:

2.3 Կատարել ԼՂՀ գլխավոր դատախազի հրամանների, հանձնարարականների, ԼՂՀ դատախազության կոլեգիայի նիստում ընդունված որոշումների պահանջները, դրանցից բխող վերլուծությունները, կազմել բաժնի աշխատանքներին վերաբերող հաշվետվությունները և զեկուցագրերը:

2.4 Կատարել բաժնի գործառնություններից ու խնդիրներից բխող՝ բաժնի պետի ու գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի այլ հանձնարարություններ:

3) Բաժնի դատախազ Գ.Վ.Ստեփանյանին՝

3.1 Իրականացնել հանձնարարված՝ կոռուպցիոն, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով հետաքննության ու նախաքննության և հիշյալ բնույթի հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և ընթացքավորման օրինականության նկատմամբ դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում, դատարանում մեղադրանքի պաշտպանություն:

3.2 ԼՂՀ գլխավոր դատախազի կողմից սահմանված կարգով իրականացնել ԼՂՀ Շուշիի, Քաշաթաղի, Հաղրուքի և Մարտունու շրջանների դատախազությունների դատախազների կողմից կոռուպցիոն, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով կատարվող աշխատանքների վերահսկողություն:

3.3 Կատարել ԼՂՀ գլխավոր դատախազի հրամանների, հանձնարարականների, ԼՂՀ դատախազության կոլեգիայի նիստում ընդունված որոշումների պահանջները, դրանցից բխող վերլուծությունները, կազմել բաժնի աշխատանքներին վերաբերող հաշվետվությունները և զեկուցագրերը:

3.4 Կատարել բաժնի գործառույթներից ու խնդիրներից բխող՝ բաժնի պետի ու գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի այլ հանձնարարություններ:

2. Ուժը կորցրած ճանաչել ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 33 առ 01.07.2011թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազության կոռուպցիոն, կազմակերպված, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով բաժնում աշխատանքի բաժանում կատարելու մասին» հրամանը:

3. Հրամանն ուղարկել ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժինների պետերին և ԼՂՀ քաղաքապետախազներին:

4. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական**

Ա.Ա.Մոսիյան